Հավելված
ՀՀ կառավարության 2024 թվականի
մայիսի 2-ի N 626-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿԱՄ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ, ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԲԱԶԱՅԻՆ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԵՎ ՄԵՏԱ-ՏՎՅԱԼՆԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ, ՄՇԱԿՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔՄԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՕԴԱԼՈՒՍԱՆԿԱՐԱՀԱՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՄ ՄԵՐԺՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ

1. Սույն կարգով կարգավորվում են ֆիզիկական կամ իրավաբանական անձանց, այդ թվում՝ օտարերկրյա, գործունեության արդյունքներով Հայաստանի Հանրապետության տարածքի վերաբերյալ բազային տարածական տվյալների և մետատվյալների ստեղծման, մշակման կամ հավաքման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքում տարածական տվյալների ստեղծման նպատակով օդալուսանկարահանման աշխատանքների իրականացման համար թույլտվության տրամադրման կամ մերժման հետ կապված հարաբերությունները:

2. Ֆիզիկական կամ իրավաբանական անձանց, այդ թվում՝ օտարերկրյա, գործունեության արդյունքներով Հայաստանի Հանրապետության տարածքի վերաբերյալ բազային տարածական տվյալների և մետատվյալների ստեղծման, մշակման կամ հավաքման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքում տարածական տվյալների ստեղծման նպատակով օդալուսանկարահանման աշխա-տանքների իրականացման համար թույլտվությունը տրամադրում կամ մերժում է լիազոր մարմինը՝ Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեն (այսուհետ՝ կոմիտե):

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿԱՄ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ, ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԲԱԶԱՅԻՆ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԵՎ ՄԵՏԱՏՎՅԱԼՆԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ, ՄՇԱԿՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

3. Հայաստանի Հանրապետության տարածքի վերաբերյալ բազային տարածական տվյալների և մետատվյալների ստեղծման, մշակման կամ հավաքման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքում տարածական տվյալների ստեղծման նպատակով օդալուսանկարահանման աշխատանքների իրականացման թույլտվությունը տրվում է ֆիզիկական կամ իրավաբանական, այդ թվում՝ օտարերկրյա անձանց կողմից ներկայացված հայտերի հիման վրա:

4. Ֆիզիկական կամ իրավաբանական անձինք, ներառյալ օտարերկրյա անձինք (այսուհետ՝ հայտատու), պետք է ներկայացնեն հայտ՝ աշխատանքները սկսելուց առնվազն 15 աշխատանքային օր առաջ: Հայտը պետք է ներառի առաջարկվող գործունեության մանրամասները՝ տվյալների հավաքագրման նպատակը, խնդիրները, հավաքագրման ժամանակահատվածը, ակնկալվող արդյունքները և տեղանքի վերաբերյալ նույնականացման տվյալները, օդալուսանկարահանման աշխատանքների եղանակների ու դրանց իրականացման համար օգտագործվող տեխնիկական միջոցների մասին տեղեկություններ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում այլ պետական մարմինների կողմից տրամադրված թույլտվությունները:

5. Կոմիտեն ուսումնասիրում է ստացված հայտը՝ դրա ամբողջականությունը և սույն կարգի պահանջներին համապատասխանությունը ստուգելու նպատակով: Անհամապատասխանության դեպքում 3 աշխատանքային օրվա ընթացքում վերադարձնում է լրամշակման:

6. Լրամշակված հայտը կոմիտեին է ներկայացվում սույն կարգի 4-րդ կետում նշված ժամկետների հաշվառմամբ:

7. Կոմիտեն կատարում է հայտի ուսումնասիրություն, տվյալների հավա-

քագրման տեղանքի համեմատություն առկա տեղեկատվական շտեմարանի հետ և բացահայտում է ուսումնասիրվող տարածքի առանձնահատկությունները:

8. Կոմիտեն պաշտպանության և ազգային անվտանգության հարցերին առնչվող հայտերի դեպքում պարտադիր հարցմամբ դիմում է ազգային անվտանգության և պաշտպանության բնագավառի լիազոր մարմիններին՝ տրամադրելով համառոտ տեղեկատվություն կատարվող աշխատանքների վերաբերյալ, նաև կցելով ներկայացված հայտը:

9. Հարցումն ուղարկելուց հետո սույն կարգի 8-րդ կետով նշված համապատասխան մարմինն ուսումնասիրում է ներկայացված նյութերը (փաստաթղթերը) և 10 աշխատանքային օրվա ընթացքում տալիս է դրական կամ բացասական կարծիք:

10. Կոմիտեն ամփոփում է ստացված կարծիքները՝ կազմելով դրական կամ բացասական եզրակացություն և գրավոր պատասխանում է հայտատուին՝ տրամադրելով թույլտվություն կամ մերժում հայտը (այդ թվում՝ լրամշակված) ստանալու օրվանից 15 աշխատանքային օրվա ընթացքում: Թույլտվությունը տրվում է հայտում նշված ժամկետներում իրականացվող աշխատանքների ամբողջ ծավալի համար:

11. Թույլտվության տրամադրման մերժման պարագայում կոմիտեն ներկայացնում է մերժման հիմքերը:

12. Թույլտվության տրամադրման մերժման հիմք է սույն կարգի 9-րդ կետով սահմանված կարգով տրամադրված բացասական կարծիքը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

02.05.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ